

կարևորութիւնը ամենայն մարդու համար, զգալով միանգամայն Համաժողովուրդի և Վարչապետի կողմից բնակող Հայ մանկուցան կարօտութիւնը, նոցա ապագայ երջանկութեան շուրջ պատրաստեցին՝ հիմնելով երկու ծխական դպրոց: Եւ արդիւնաւէտ յարատեւութեան համար ևս հոգաբարձութիւններ կազմելով, կը ջանան հիմնաւոր կարգաւ, և վայելուչ բարեկարգութեամբ զարգարիւ իւրեանց հիմնադրած երկու դպրոցները: Ուստի ըզմանալով յաջողութիւն և կարողութիւն թէ՛ գլխաւոր վերատեսչի Պ. Միքայէլի Խանաղեանց և թէ՛ հոգաբարձուացն, արժան կը համարւիմք յաւելուլ զայս ևս, որ Աստուծով իգական սեռի զատարարակութեան և լուսաւորութեան համար ամենակարեւոր դպրոցաց հիմնադրութեան պէտքն ևս կը լրացնեն:

Երնջակու Ս. Կարապետի վանահայր Արժան. Յովհաննէս վարդապետ Փեշմալճեանց՝ յիշեալ Վանուց զանգակատան որմունքը և սաղայատակը վերանորոգել և յարգարիւ տուած ժամանակ, անցեալ փետրվար ամսոյ սկիզբը, Վանուց որմոյն արեւմտեան ճակատի զանգակատան բռուած եղիւքը, արդէն անձրեւներէ մաշուած լինելով՝ ծեփքին ներքեւէն հայկական առուից նշաններ կը դիտէ և անմիջապէս զրուածքին երեսը կը մաքրէ, և մեծաւ զգուշութեամբ հետեւեալ հետաքրքրական արձանագրութիւնը կը կարդայ:

«Շնորհիւ Տեառն և մեծին Աստուծոյ, մեք միաբան սուրբ Կարապետի Վանից Երնջակու՝ Եսայի և Վաղար վարդապետքս տեսանելով զքայքայումն Սննատանիս՝ հիմնարկեալն ի Մաղաքիաց ձգնաւոր վար-

դապետէ Վրիմեցւոյ և աւարտեալն ի Յովհաննէս Որսանեցի մեծ վարդապետէ՝ որդւոյ Խանէի մեծի իշխանին Վաղատնոյ յամի Տեառն ՌԵՋԷ և ի թուին Հայոց ՊՂ. նորոգեցաք զվանս ի հիմանէ կոխածոյ վեմօք՝ արօք Աղգիս Հայոց, ի Կաթուղիկոսութեան սրբոյ Լջմիածնի Տեառն Յակոբայ Ղ. Ջուղայեցւոյ, ի Թագաւորութեան Պարսից՝ փոքր Շահապասայ յամի Տեառն ՌՈՒՆՕ. և ի թուին Հայոց ՌՇՆ և զնեալ յանիրաւացի տիրապետողաց երկրիս Վախիջեանայ, յանձնեցաք վանիցս ի տիրապետութիւն յաւիտեան զկալուածս՝ որ յառաջն ևս էր Վանիցս, որոյ արեւելեան սահմանն է գիւղն Ապարաններն, հիւսիսայինն՝ Վանուց քարահանքն, արեւմտեանն՝ Արեւիկոն իւր սարովն մինչև Խորձորագլուին. իսկ հարաւայինն՝ Վանաց քարն և անտի գետովն ցԱպարներն. ով որ վաճառել կամ յափշտակել ջանայ, մասն Յուդայի և Կայէնի առցէ. իսկ եթէ ի մահմետականաց իցէ, յԱստուծոյ և փեղանպարէն նալլաթ Ռ. Ռ. նալլաթ կրեցէ»:

## ԱԳԱՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ

Ի ՍԱՄԱԹԻԱ:

Ոչ սակաւ ուրախութիւն պատճառեց մեզ ի Սամաթիա (Վ. Պօլսոյ արուարձանը) հաստատուած Աղապեան վարժարանն Հայ օրիորդաց:

Վերջին մեծ հրդեհը՝ որ Սամաթիոյ՝ արդէն քանիցս պատահած հրկիզութիւններէ զրկեթ, աղքատացած Հայերը՝ ոչ թէ իւրեանց բնակարաններէն միայն, այլ և երկու մեծ կիսաքարու կիր եկեղեցիներէն, հարուստ



Մատենադարանէն, և անուանի ու բազմադր-  
դիւն երկսեռ վարժարաններէն զընկելով, մեծ  
արտաճութեան ու դառն արտասուաց ենթար-  
կած էր տեղւոյն Հայ - հասարակութիւնը  
'ի պատճառս կորստեան անձնական գոյից և  
Ազգային բարեպաշտական կալուածոց: Իսկ  
ուսումնասէր մասին առաւել զգալի ու կրս-  
կծելի էր վարժարանաց պակասութիւնը:

Բայց օրհնեալ լինի այն Ազգասէրը, այն  
անձնանուէրը, որ միշտ գործովք հաստա-  
տել սիրելով իւր վառվռուն եռանդն ու  
փնջ զգացմունքները, այս անգամ ևս Սա-  
մաթիաբնակ Հայոց\*) անձկութեանց լրման  
բարերար հանդիսացաւ՝ ջերմեռանդ և բարե-  
պաշտ Հայ ժողովրդեան սիրայօժար նուէր-  
ներով և սրօք հաստատելով Ագապեան  
Հայ - օրիորդաց վարժարանը:

Անտարակոյս եմք, զի բարեոք գաստիա-  
րակութեամբ կրթեալ և ուսեալ Հայ մայ-  
րեր պիտի պատրաստուին նոյն ցանկալի ու  
բարեպաշտական յարկին ներքե՝ ապագայի  
համար 'ի փառս և 'ի պարծանս Հայ - Ազ-  
գութեան: Արու՛մ (ինչպէս նաեւ այլոց ամե-  
նեցուն համար միանգամայն, ուր և երբ որ  
հիմնուած լինին) մեր սիրելի Ազգայինք՝  
լստ չափու զգացմանցն, չ'պիտի խնայեն  
իւրեանց նպատտ ու օժանդակութիւնքը:

\*) Աստ արժան է յիշել, որ Սամաթիաբնակ Հայր  
հրկիզեալ արալկան վարժարանին կարօտութիւնն  
արդէն լրացուցին առժամանակեայ մի յարմար յարկի  
ներքեւ հաւաքելով Հայ մանկտին, ուր նոցա մտա-  
ւորական լուսաւորութեան եւ դաստիարակութեան  
եւ այլն կը ջանան:

Իսկ նոր շինուելիք վարժարանին ի նպատտ, վսեմ.  
Մկրտիչ պէյրէյի տանէն երկու հարիւր օսմ. ոսկի (4550  
արծ. մանէթի չափ) նուէր ընդունած են կանխաւ.  
Բայց պայն իբրեւ դրամադրուս պահելով կը շահեցնեն,  
սրպէս զի ի ժամանակին ի գործ դնեն կամ դպրոցի  
շինութեան եւ կամ նորա պահպանութեան:

Այդ այս առթիւ Արարատը ամենայն  
սիրով և բերկրութեամբ պարգեւով խորին  
շնորհակալութիւն առ մեծագոյատիւ Ա.Յ.Փ.  
Ազգասէր անձն, կը դովէ նորա ամենայն  
ժամանակ ունեցած բարի բարի դիտմունքը  
և նպատակները: Այլ և կատարեալ յաջո-  
ղութիւն և յարատեւ ու արդիւնաւոր զար-  
գացումն կը բարեկալութէ յիշեալ վարժա-  
րանին:

Ս. Լ. ջմիածնի տաճարի արեւմտեան պա-  
տին կից շինուած փոքրեթաւոր երեք պահա-  
րանները կը յուսամք, որ մէկ ամիսէն կը  
լրանայ:

Սոյն պահարանաց շինութիւնը տաճա-  
րին հետ հատուտ կապելու համար, հին  
պատին երեսի քարերը և այլն հանուած  
ժամանակ, տաճարին հարաւային արեւմտե-  
ան անկիւնէն վերին հին և գողտուկ պա-  
հարանը կը բացուի, և եկեղեցական զար-  
դուց սնտուկները երեւելով, գործաւորք կը  
կարծեն մի նոր դիւա լինել. ուստի ձայն  
կը տան լուսարարին և միաբանից, որք կեր-  
թան և կը տեսնեն, թէ ինքեանց ծանօթ՝  
տաճարին վերին փոքր պահարանն է: Այս  
եղելութիւնը հեռաւոր երկիրներ և կողմեր  
զանազան տարաձայնութեանց առիթ տը-  
ված լինելով, հալկ դատուեցաւ ներկայիւս  
հրատարակել անտեղի տարաձայնութեանց  
բոլորովին սուտ և սխալ լինելը:

## ՄԱՀԱԳՈՅԺ

Չատիկի հոգեգուարձ տօնն այս տարի  
սիրախառն երեւթ մ'առաւ Պէշեկթաշի  
մէջ՝ մեծածուն անձի մը մահուամբ, որ դա-  
րուս մէջ եկած զացած նշանաւոր ազգայ-